ԶԱՔԱՐՅԱՆ ԵՎ ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴՑԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XII Դ. ԿԵՍԵՐ – XIII Դ. ՎԵՐՋԵՐ)

THE RELATIONS BETWEEN THE ZAKARYAN AND MAHKANABERDTSI PRINCELY HOUSES (MID OF THE 12TH – END OF THE 13TH CENTURIES)

ОТНОШЕНИЯ МЕЖДУ КНЯЖЕСКИМИ ДОМАМИ ЗАКАРЯНОВ И МАХКАНАБЕРДЦИ (СЕРЕДИНА XII В. – КОНЕЦ XIII В.)

Արտաշես Շահնազարյան
Artashes Shahnazaryan
Арташес Шахназарян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Science, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

artashes.shahnazaryan@academhistory.am

Ներկայացվել է՝ 10.09.2024; գրախոսվել է՝ 09.03.2026; ընդունվել է՝ 14.04.2026
Received: 10.09.2024; Revised: 09.03.2026; Accepted: 14.04.2026
Представлено: 10.09.2024; рецензировано: 09.03.2026; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence–ի պայմաններով
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-14

Ամփոփում – XII դ. առաջին կեսին պատմական ասպարեզ իջած և նույն դարի երկրորդ կեսին վերելք ապրած իշխանական տներից Զաքարյանների ու Մահկանաբերդցիների փոխհարաբերությունները սկիզբ առան նույն դարի կեսերին՝ նրանց միջև խնամիական կապի հաստատմամբ: Զաքարյանների տոհմավագ իշխան Զաքարե Ա-ի որդի Մեծ Սարգիսն ամուսնացավ Մահկանաբերդցիների տոհմի հիմնադիր իշխան Վահրամի դուստր Սահակդուխտի հետ: Քաղաքական ենթատեքստ ունեցող այդ ամուսնությունն այդ երկու իշխանական տների դիրքերի հետագա ամրապնդման նպատակ էր հետապնդում: Զաքարյանների ու Մահկանաբերդցիների փոխհարաբերությունների բնույթը ժամանակի ընթացքում ենթարկվում էր փոփոխությունների՝ կախված նրանց հզորությունից և Վրացական թագավորության կառավարման համակարգում ունեցած դիրքերից: Դրա հետևանքով այդ իշխանական տները մերթ հարաբերվում էին իբրև հավասարներ, մերթ էլ որպես գերակա-ստորականեր: Զաքարյանների ու Մահկանաբերդցիների խնամիանալու ժամանակ վերջիններս Վրացական թագավորության ավատատիրական սանդուղքում Զաքարյաններից բարձր տեղ էին զբաղեցնում: Սակայն Օրբելիների գլխավորած 1176–1177 թթ. ապստամբության ճնշումից հետո նրանց տեղերը փոխվեցին: Հա-

ղարծնի վանքի 1184 թ. արձանագրությունում Մեծ Սարգիսը հիշատակվում է իր աներոջ որդի Ամիր-Քրդից առաջ: Այդուհանդերձ, այդ իշխանական տների փոխհարաբերությունները դրանց առաջին փուլում կրում էին ոչ թե գերակա-ստորակայական, այլ՝ հորիզոնական բնույթ: Զաքարյանների ու Մահկանաբերդցիների փոխհարաբերությունների բնույթը դրանց երկրորդ փուլում փոխվեց: Մահկանաբերդցիների Խավռասյան ճյուղի հիմնադիր Խավռաս Ա-ը դարձավ Զաքարե Բ-ի որդի Շահնշահի ստորական ու թոռ Զաքարե Գ-ի դաստիարակը: Մահկանաբերդցիների Սադունյան ճյուղի հիմնադիր Սադուն Բ-ն էլ նախ Իվանե Ա-ի թոռնուհի Խոշաքի ստորական էր: Սակայն Սադուն Բ-ի հզորացման շնորհիվ նրանց հարաբերությունները դարձան հորիզոնական:

Abstract – The relations between the Zakaryan and Mahkanaberdtsi princely houses that came out in the first half of the 12th century and rose to prominence in the second half of the same century, began in the middle of the same century with the establishment of in-law ties between them. Sargis the Great, son of Zakare I, the eldest prince of the Zakaryan dynasty, married Sahakdukht, daughter of Vahram, the founder of the Mahkanaberd dynasty. This marriage, which had a political connotation, pursued the goal of further strengthening the positions of these two in-law princely houses. The nature of the relations between the Zakaryans and Mahkanaberdtsi changed over time, depending on their power and the position they occupied in the system of governance of the Georgian kingdom. As a result, these princely houses sometimes treated each other as equals, and sometimes as vassals. During the establishment of in-law relations between the Zakaryans and the Makhkanaberdsis, tha launter occupied a higher position in the feudal ladder of the Georgian kingdom. However, after the suppression of the uprising of 1176–1177, led by the Orbelis, their places changed. In the inscriptions of the Hagartsin monastery in 1184, Sargis the Great is mentioned before the son of his father-in-law, Amir-Kurd. However, the relations between these princely houses at the first stage were not suzerain-vassal, but horizontal. The nature of the relationship between Zakaryans and Makhkanberdsis at their second stage changed. Havras I, the founder of the Havrasyan branch of Makhkanaberdsis, became a vassal of Shahnshah, the son of Zakare II, and the mentor of Zakare III, the grandson of Zakare II. Sadun II, the founder of the Sadun branch of the Mahkanaberdsi dynasty, was originally a vassal of Khoshak, granddaughter of Ivane I. However, thanks to the strengthening of the power of Sadun II, their relations became horizontal.

Аннотация – Княжеские дома Закарянов и Махканабердци появились на исторической арене в первой половине XII в., и уже во второй половине того же века они обрели известность. Отношения между Закарянами и Махканабердци, обусловленные наличием сватовских связей, сложились в середине того же века. Саргис Великий, сын Закаре I, старшего князя рода Закарянов, женился на Саакдухт, дочери Ваграма, основателя рода Махканабердци. Этот брак, имевший политический подтекст, призван был способствовать дальнейшему укреплению позиций названных княжеских домов. Характер отношений между Закарянами и Махканабердци менялся в зависимости от их мощи и положения в системе управления Грузинского царства. Посему иногда это были отношения на равных, а иногда – сюзеренов-вассалов. В период установления сватовских отношений между Закарянами и Махканабердци последние занимали более высокое положение в феодальной иерархии Грузинского царства, нежели Закаряны. Однако после подавления восстания 1176–1177 годов, возглавленного Орбели, их статусы изменились. В надписи

монастыря Агарцин, датированной 1184 г., имя Саргиса Великого упоминается перед именем сына его тестя – Амир-Курда. Следует отметить, что на начальном этапе отношения между этими княжескими домами были на равных. Между тем в дальнейшем они претерпели изменения. Хаврас I, основатель ветви Хаврасянов рода Махканабердци, стал вассалом Шахншаха, сына Закаре II, и наставником Закаре III, внука Закаре II. Садун II, основатель Садунской ветви рода Махканабердци, первоначально был вассалом Хошак, внучки Иване I. Однако, благодаря усилению мощи Садуна II, их отношения выровнились.

Հիմնաբառեր – Զաքարյան, Մահկանաբերդցի, Ավագ, Սադուն Ա, Խոշաք:
Keywords – Zakaryan, Mahkanaberdtsi, Avag, Sadun I, Khoshaq.
Ключевые слова – Закарян, Махканабердци, Аваг, Садун I, Хошак.

Ներածություն

Զաքարյան և Մահկանաբերդցի իշխանական տների փոխհարաբերությունները դիտարկվող ժամանակաշրջանի հայոց պատմության ուշագրավ էջերից են: Դրանց քննությունը նպաստում է աղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում պատկերացում կազմելու զարգացած ավատատիրության շրջանի երկրորդ փուլի Հայաստանի այդ նշանավոր իշխանական տների փոխհարաբերությունների մասին:

Դրանց, հատկապես Զաքարյանների պատմությունը հետաքրքրել է ինչպես հայ, այնպես էլ օտար պատմաբաններին, որոնք արծարծել են նաև այդ տոհմերի փոխհարաբերությունների հետ կապված որոշ դրվագներ: Այդ բնագավառում իրենց ներդրումն ունեն Գ. Հովսեփյանը, Հ. Մանանդյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ, հատկապես Հ. Մարգարյանը: Այդուամենայնիվ, խնդրո առարկա երկու իշխանական տների փոխհարաբերությունները հոդվածային հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել և համապարփակ քննության չեն ենթարկվել: Բացի այդ, նախորդ հետազոտողները երբեմն կատարել են այնպիսի դիտարկումներ, որոնք կարոտ են հիմնավորման կամ սրբագրման, ինչը փորձել ենք անել:

Զաքարյանների ու Մահկանաբերդցիների փոխհարաբերությունների առաջին փուլը

Զաքարյան և Մահկանաբերդցի իշխանական տների փոխհարաբերությունների հիմքերը դրվեցին նրանց միջև խնամիական կապի հաստատմամբ: Վրացական թագավորության հզոր իշխանատոհմ Օրբելիների ստորակա Զաքարյանների տոհմավագ Զաքարե Ա իշխանի ավագ որդի Մեծ Սարգիսն ամուսնացավ վրաց արքունիքում զգալի ազդեցություն ունեցող և Տփղիսի քաղաքապետի պաշտոնը վարած հայտնի իշխաններ Վասակ ու Ամիր-Քուրդ Մահկանաբերդցիների քույր Սահակդուխտի հետ: Նրանց հայրն իշխան Վահրամ Մահկանաբերդցին էր:

Նոր պատմական ասպարեզ իջած այս իշխանական տների միջև խնամիական կապի հաստատման քաղաքական ենթատեքստ ունենալը կասկած չի հարուցում: Տարբեր միջոցներով բարձրացման ձգտող Զաքարյաններն ի թիվս այլ միջոցների, ջանում էին իրենց դիրքերն ամրապնդել նաև հին ու նոր իշխանական տների հետ խնամիանալու միջոցով: Նույն կերպ էին վարվում նաև Մահկանաբերդցիները: Ընդ որում, երկու իշխանական տներն էլ խնամիական կապեր էին հաստատում ոչ միայն հայկական, այլև օտար իշխանական տների հետ: Հետևաբար, նրանց խնամիանալը «միանգամայն օրինաչափ իրողություն է ներկայանում» (Մարգարյան 2023, 188):

Մեծ Սարգսի ու Սահակդուխտի ամուսնությունը փաստող գրչագիր ու վիմագիր աղբյուրները երեքն են: Անիի Զաքարեի եկեղեցու անթվակիր մի արձանագրության համաձայն «պատարագն որ սմա կատարի Սահակդխտո է, ծնաւղի Զաքարեա եւ Իւանէի» (Դիվան հայ վիմագրության 1966, 57): Այս արձանագրությունը թվագրելի է XIII դ. սկզբներով և Մեծ Սարգսի ու Սահակդուխտի՝ ամուսիններ լինելու մասին հնագույն վկայությունն է: Բագնայրի նշանավոր Ավետարանի 1232 թվակիր հիշատակարանում Վասակ ու Ամիր-Քուրդ Մահկանաբերդցիների կրտսեր եղբայր Ամիր-Սարգիսը ներկայացվում է որպես «եղբայր մաւր կեսառոսաց Հայոց եւ Վրաց եւ ամենայն Ափխազաց, բարեպաշտիցն եւ Աստուծով զաւրացելոցն մեծին Զաքարիայի եւ Իւանեի» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1984, 178): Կիրակոս Գանձակեցին իր հերթին Զաքարյան եղբայրներին ներկայացնում է իբրև «որդիք քեռ բարեպաշտ իշխանին Քրդին» (Կիրակոս Գանձակեցի 1961, 210):

Ինչպես տեսնում ենք, վերոբերյալ երեք աղբյուրներից ոչ մեկն էլ հիշյալ ամուսնության գոնե մոտավոր թվականը չի հայտնում: Անդրադառնալով այդ իրադարձության թվագրմանը, Հ. Մարգարյանը գտել է, որ «Մահկանաբերդցիների եւ Զաքարյանների միջեւ խնամիական կապի հաստատումը շուրջ 1150 թվականին կամ մի փոքր ավելի վաղ՝ միանգամայն օրինաչափ իրողություն է ներկայացնում» (Մարգարյան 2023, 188): Դատելով Մեծ Սարգսի ու Սահակդուխտի և նրանց յոթ երեխաների ծննդյան մոտավոր թվականներից, այս դիտարկումն ընդունելի է:

Չնայած խնամիներ լինելուն, Վրացական թագավորության կենտրոնական իշխանության դեմ Օրբելիների գլխավորած 1176–1177 թթ. հզոր ապստամբության առաջին փուլում Զաքարյաններն ու Մահկանաբերդցիները գտնվում էին հակադիր ճամբարներում: Զաքարյան իշխանական տունը գլխավորող Մեծ Սարգիսն իր ավագ որդի Զաքարե Բ-ի ու վախճանված եղբայր Վահրամի անդրանիկ տղա Բլուզ Զաքարեի հետ իբրև Օրբելիների ստորակա Հյուսիսային Հայաստանի որոշ այլ հայ իշխանների հետ ապստամբների շարքերում էր: Ինչ վերաբերում է ավագ եղբայր Վասակից հետո Մահկանաբերդցի իշխանական տան գլուխ անցած Ամիր-Քրդին, ապա նա վրաց արքա Գեորգի III-ի (1156–1184) կարևոր աջակիցներից էր և մեծ դեր խաղաց այդ ապստամբության ճնշման գործում (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1984, 294):

Ապստամբության ղեկավար Իվանե Օրբելու՝ ստիպված Լոռէ բերդում ամրանալուց, իսկ նրա եղբայր Լիպարիտի ջոկատը Մահկանաբերդցիների տիրույթ Մահկանաբերդի գավառում Ամիր-Քրդի կողմից պարտության մատնվելուց ու նրա՝ դարձյալ նույն բերդում ապաստանելուց հետո Մեծ Սարգիսն անցավ թագավորի կողմը (Картлис цховреба. История Грузии 2008, 251): Վաստակաշատ Գ. Հովսեփյանը Մեծ Սարգսի այս քայլը ենթադրաբար նրա աներձագ Ամիր-Քրդի ազդեցությամբ է պայմանավորել (Հովսեփյան 1969, 3):

Սակայն այս ենթադրությունը վիճարկելի է, քանզի, եթե փեսայի վրա Ամիր-Քրդի ազդեցությունն այդքան մեծ էր, ապա ինչով բացատրել, որ նրան չէր հաջողվել հենց սկզբից կանխել ապստամբներին Մեծ Սարգսի հարելը: Այդուհանդերձ, չի բացառվում, որ ապստամբության սկզբնական շրջանում Ամիր-Քուրդը վերջինիս հորդորած կլիներ իր անմիջական գերակա Իվանե Օրբելուն լքելով՝ հարել Գեորգի III-ին: Իրականում մեծ հավանականություն ունեցող այդ հորդորը չէ, որ «Օրբելիների եղբայր ու սիրելի» (Картлис цховреба. История Грузии 2008, 251) Մեծ Սարգսին դրդել է որդու ու եղբորորդու հետ անցնել թագավորի կողմը: Բանն այն է, որ Գեորգի III-ը խոստացել էր ապստամբներից իր կողմն անցածներին ներում շնորհելուց զատ նվիրել Օրբելիների կալվածքները (Օրբելյան 1910, 385), որի կարիքը փոքր տիրույթներ ունեցող Զաքարյանները շատ էին զգում: Եվ որ առավել կարևոր է, Մեծ Սարգսի պես զորավարի համար չէր կարող պարզ չլինել, որ Իվանե ու Լիպարիտ Օրբելիների՝ Լոռէ բերդի պարիսպներին ապավինելուց հետո ապստամբության պարտությունը մոտ է, իր տոհմի համար անցանկալի հետևանքներով:

Թամար թագուհու առաջին պատմիչի համաձայն «թագավորը նրան ընդունեց սիրալիր ու փաղաքուշ և վստահություն ցուցաբերեց՝ նրա տոհմիկությանը համապատասխան (Картлис цховреба. История Грузии 2008, 251), սակայն որևէ տիրույթի կամ պաշտոնի չարժանացրեց: Այդուհանդերձ, Մեծ Սարգիսը Հաղարծնի վանքի գավթի 1184 թվակիր արձանագրության մեջ հիշատակվում է Տփղիսի քաղաքապետ աներորդուց առաջ (Դիվան հայ վիմագրության 1977, 97): Դրանից հետևում է, որ նա դարձել էր Գեորգի III-ի անմիջական ստորական և վրացական թագավորության ավատատիրական սանդուղքում Ամիր-Քրդից բարձր տեղ էր զբաղեցնում:

Մեծ Սարգսի մահվանից (1185 թ.) հետո էլ Զաքարյաններն ու Մահկանաբերդցիները շարունակում էին հարաբերվել: Դրա անուղղակի վկայությունն է Նոր Գետիկի վանքը կառուցելու համար հող հատկացնելու նպատակով Իվանե Ա-ին Մխիթար Գոշի դիմելու և բարեհաճ վերաբերմունքի արժանանալու իրողությունը (Կիրակոս Գանձակեցի 1961, 210–211):

Կիրակոս Գանձակեցին այս անցքի հետ կապված Ամիր-Քրդին չի հիշատակում: Սակայն Ս. Ավագյանն ակնհայտորեն ելնելով նրա և Մխիթար Գոշի մտերմությունից, ինչպես նաև դրանից անմիջապես հետո Զաքարե Բ-ի ու Իվանե Ա-ի՝ Ամիր-Քրդի քեռորդիները լինելը Կիրակոս Գանձակեցու կողմից արձանագրվելուց (Կիրակոս Գանձակեցի 1961, 208, 210), գրել է, որ Մխիթար Գոշը դիմել է

երկուսին էլ՝ Ամիր-Քրդի միջոցով (Դիվան հայ վիմագրության 1977, 62): Հ. Մարգարյանն էլ նկատել է, որ քանզի Զաքարյան եղբայրներն Ամիր-Քրդի քեռորդիներն էին՝ «Իվանեն սիրով ընդառաջեց Ամիր-Քրդի մտերիմ Մխիթար Գոշի՝ Գետիկի վանքի համար նոր տեղ հատկացնելու խնդրանքին» (Մարգարյան 2023, 194):

Քանի որ Նոր Գետիկի կառուցման համար հատկացված հողատարածքը գտնվում էր Իվանե Ա-ի տիրույթներում, Մխիթար Գոշը դիմել է առաջին հերթին նրան: Ինչ վերաբերում է Մխիթար Գոշի խնդրանքի բավարարման հիմքում նրա ու Ամիր-Քրդի մտերմության ինչ-որ կերպ դեր խաղալուն, ապա նման հանգամանքն իհարկե իր նշանակությունն ունեցել է: Դրա որոշակի վկայությունն է Կիրակոս Գանձակեցու կողմից ոչ պատահաբար Ամիր-Քրդի ու Զաքարյան եղբայրների ազգակցական կապի արձանագրումը: Վերոշարադրյալից հետևում է, որ այս փուլում երկու իշխանական տների փոխհարաբերությունները կրում էին ոչ թե գերակա-ստորակայական, այլ հորիզոնական բնույթ:

Զաքարյանների ու Մահկանաբերդցիների փոխհարաբերությունների երկրորդ փուլը

Զաքարյան ու Մահկանաբերդցի իշխանական տների փոխհարաբերությունների մասին հաջորդ վկայությունը թվագրվում է XIII դ. 30-ական թվականների սկզբներով: Դա Բագնայրի վերը հիշատակված Ավետարանի 1232 թվակիր հիշատակարանն է: Դրանից հետևում է, որ Մահկանաբերդցիների կրտսեր՝ Խավռասյան ճյուղի հիմնադիր իշխանաց իշխան Խավռաս Ա-ը վայելել է իր հորաքրոջ որդիներ Զաքարե Բ-ի ու Իվանե Ա-ի հովանավորությունը, եղել վերջիններիս հավատարիմն ու նրանց շնորհիվ բարձրացել: Հիշատակարանի համաձայն Խավռաս Ա-ը «մեծին Զաքարիայի եւ Իւանեի... առաջի սնեալ եւ զարդա[րե]ալ, ի նոցին ողորմութեամբն մեծացեալ եւ փառաւորեալ ... հաստատուն եւ անխախտելի պահելով զմիամտութիւնն առ բարեպաշտ տեարսն իւր, ծառայելով յամենայն սրտէ և զամենայն զաւրութենէ իւրմէ (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1984, 178):

Խավռաս Ա-ը լինելով Զաքարյան եղբայրների ստորական երկուսին էլ հավատարմորեն ծառայել է: Սակայն «յետ տարաժամ փոխելոյն առ Քրիստոս Մեծին Զաքարիայի» (Հայերեն ձեռագրերի հիշատակարեններ 1984, 178), այսինքն 1212 թ. հետո ծառայել է միայն նրա ընտանիքին: Այսպիսով, նա սերտորեն հարաբերվել է միայն Զաքարյանների՝ Զաքարե Բ-ի որդի Շահնշահ Ա-ի անունով Շահնշահյան տուն կոչված ճյուղի հետ:

Խավռաս Ա-ն եղել է Շահնշահ Ա-ի որդի Զաքարիա Գ-ի դաստիարակը և «ըստ արժանի հաւատարիմ ծառայութեանն իւրոյ ընկալեալ զհատուցումն՝ մեծաւ պատուով պատուեցաւ ըստ Վրացն բարբառոյ՝ մսախուրթախուցես, որ ըստ մերումս թարգմանի գլուխ իշխեցող եւ հրամա[նա]տար ամենայն իշխեցողաց եւ գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1984, 1978): Խավռաս Ա-ը գորովանքով է խոսում իր սան «սքանչելատեսիլ» Զաքարիա Գ-ի մասին, որին դաստիարակում և ուսուցանում

էր «ամենայն երկյուղիւ և աստուածապաշտութեամբ, զոր ի նախնեացն ուսեալ էր» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1984, 178), այսինքն հայկական ոգով (Մարգարյան 2023, 187):

Խավռաս Ա-ի ու Շահնշահ Ա-ի հարաբերությունները սոսկ գերակա-ստորակայականով չեն սահմանափակվել: Բագնայրի վանքում թողած 1262 թվակիր ընդարձակ արձանագրության մեջ նրա թոռ Խավռաս Բ-ը հայտնում է, որ ժամանակին իր պապն Աշնակ գյուղը գնել է և «սիկելով» այսինքն վավերագրով տվել իրեն (Ալիշան, Շիրակ 1881, 116; Վիմական տարեգիր 1913, 104): Աշնակը Շահնշահ Ա-ի տիրույթների մեջ մտած լինելուց բխում է, որ Խավռաս Ա-ն այն գնել է իր գերակա Շահնշահ Ա-ից, ինչը պարզվում է Խավռաս Բ-ի հետագա շարադրանքից: Սակայն պարզ չէ, թե ինչ հիմքով վերջինս վերստին տիրանում է Աշնակին: Խավռաս Բ-ն ստիպված է լինում կնոջ բաժինք ակնեղենն իր պարոն Շահնշահ Ա-ին տալով Աշնակը կրկին գնել ու նվիրել Բագնայրի վանքին (Ալիշան, Շիրակ 1881, 116; Վիմական տարեգիր 1913, 104): Բագնայրի վանքում Խավռաս Բ-ի թողած 1266 թվակիր վիմագրից կարելի է մակաբերել, որ Խավռաս Ա-ն իր գերակա Շահնշահ Ա-ից նաև գնումներ է կատարել (Ալիշան 1881, 116; Վիմական տարեգիր 1913, 104):

Մահկանաբերդցիների ավագ՝ Սադունյան, ճյուղն էլ սերտ հարաբերություններ ուներ Զաքարյանների Ավագյան տուն կոչված ճյուղի հետ: Դրանից առաջինն այդպես էր կոչվում Ամիր-Քրդի ծոռ Սադուն Բ-ի, իսկ երկրորդը՝ Իվանե Ա-ի միակ որդի Ավագի անունով:

Սադուն Բ-ը Մահկանաբերդցի իշխանական տան ամենանշանավոր ու երևելի ներկայացուցիչն էր: Նա ժամանակի հայկական և օտար աղբյուրների համերաշխ վկայություններով եղել է տարբեր առումներով շատ օժտված անձնավորություն (Կիրակոս Գանձակեցի 1961, 386; Գրիգոր Ակներցի 1974, 48; Картлис цховреба. История Грузии 2008, 365, 371, 375; Рашид ад-Дин 1946, 49–50): Զաքարյանների Ավագյան տուն կոչված ճյուղի ու Մահկանաբերդցիների Սադունյան ճյուղի փոխհարաբերությունները սկիզբ առան, երբ Սադուն Բ-ը դարձավ Ավագ Զաքարյանի դուստր Խոշաքի խնամակալը:

Բանն այն է, որ երբ օրինական արու զավակ չունեցող Ավագը 1250 թ. վախճանվեց (Կիրակոս Գանձակեցի 1961, 321; Վարդան վարդապետ 1862, 148), Խոշաքի դեռ երեխա լինելու պատճառով մոնղոլները «ետուն զիշխանութիւն նորա Զաքարէի, որդւոյն Շահնշահի, հօրեղբօր որդւոյ Աւագին...: Եւ ապա հանեալ ի Զաքարէէ, ետուն կնոջ Աւագին, որում անուն էր Գոնցա» (Կիրակոս Գանձակեցի 1961, 321): Գոնցան վրացուհի էր՝ Ռաճա գավառի Էրիսթավի դուստրը (Картлис цховреба. История Грузии 2008, 365):

Դրանից հետո Գոնցային կնության առավ վրաց թագավոր Դավիթ VII-ը (1246–1271), որն ավելի շատ հայտնի է Ուլու Դավիթ անունով: XIV դարի վրաց Անանուն ժամանակագիրն այս ամուսնությունը պայմանավորել է Ավագի, իր խոսքերով ասած, «բարետես» այրու հանդեպ Ուլու Դավթի տածած սիրով (Картлис цховреба. История Грузии 2008, 365): Իրականում վրաց արքայի

նպատակն Ավագի կալվածքներն արքունապատկան տիրույթներ ներառելն էր, իսկ Գոնցայինը՝ Ավագի ժառանգության նկատմամբ Շահնշահյան տան և Սյունյաց հզոր իշխան Սմբատ Օրբելյանի հավակնություններին վերջ տալը:

XIV դարի վրաց Անանուն ժամանակագրի համաձայն, Ուլու Դավիթը Գոնցային կնության առնելով «Ավագի դստերը թողեց նրա հայրական տիրույթում և նրան հանձնարարեց Սադուն Մահկանաբերդցուն, որն իմաստուն, խելամիտ, բարեխոհ մարդ էր, գեղեցիկ, ուժով, խիստ հզոր, աչքի ընկնող, ընտիր ըմբիշ, վարպետ նետաձիգ (Картлис цховреба. История Грузии 2008, 365): Այնուհետև ժամանակագիրը պատմելով Սադուն Բ-ի նկատմամբ իլխան Հուլավուի (1256–1265) ընդգծված բարեհաճ վերաբերմունքի մասին, հավելում է, որ «խելացիության համար Դավիթ թագավորը ևս նրան պատիվ տվեց և նրան հանձնարարեց Ավագի տունը» (Картлис цховреба. История Грузии 2008, 365):

Աշ. Հովհաննիսյանը հիմք ընդունելով Ստեփանոս Օրբելյանի վկայությունն առ այն, որ Սյունյաց իշխան Սմբատ Օրբելյանը «հայրագիր լեալ տանն Ավագին» (Ստեփաննոս Օրբելյան 1910, 418), կարծել է, թե Ուլու Դավթի հետ ամուսնանալուց հետո Գոնցան դստեր խնամակալությունը հանձնել է Սմբատ Օրբելյանին (Հովհաննիսյան 1957, 212): Այնուհետև նկատել է, թե տեսնելով, որ նա, շահարկելով այդ հանգամանքը, փորձում է տիրանալ Ավագի իշխանությանը, Խոշաքի խնամակալ է նշանակել Սադունին (Հովհաննիսյան 1957, 212): Սյունյաց իշխանի՝ նման հավակնություն ունենալը փաստ է, բայց նրա Խոշաքի հայրագիրը, այսինքն խնամակալը լինելու մասին Ստեփանոս Օրբելյանի պնդումը ոչ, քանզի դա ժամանակի ոչ մի աղբյուրով չի հիմնավորվում: Հետևաբար, Խոշաքի խնամակալ էր նշանակվել Սադուն Բ-ն և ոչ թե Սմբատ Օրբելյանը, ինչպես դարձյալ Ստեփանոս Օրբելյանի վերոբերյալ վկայության հիմամբ կարծվել է (Գարեգին վրդ. 1913, 28; Մանանդյան 1952, 266; Գրիգորյան 1981, 70):

Հայ-վրացական 1259-1261 թթ. հակամոնղոլական ապստամբության ճնշումից հետո մոնղոլները Գոնցային ոչ առանց Սմբատ Օրբելյանի դավերի մահապատժի ենթարկեցին (Օրբելյան 1910, 418; Картлис цховреба. История Грузии 2008, 372): Խոշաքը դրանից հետո դարձավ հայրական տիրույթների միակ տնօրինողը: Սակայն Սմբատ Օրբելյանը շարունակում էր հավակնել Ավագ Զաքարյանի ժառանգությանը (Օրբելյան 1910, 418): Այս պայմաններում Սադուն Բ-ը կատարեց մի ճիշտ հաշվարկված խորամանկ քայլ: Հենց նրա, և ոչ թե Սմբատ Օրբելյանի ջանքերով, ինչպես պնդել է Ստեփանոս Օրբելյանը (Օրբելյան 1910, 418), և որի հետևությամբ կարծել է Գ. Հովսեփյանը (Գարեգին վրդ. 1913, 24) Խոշաքը 1269 թ. ամուսնացավ Իլխանության մեծ վեզիր ու ֆինանսական դիվանի ղեկավար Սահիբ Դիվան Շամս-ադ Դին Մուհամմեդ Ջուվեյնու հետ (Մանր ժամանակագրություններ 1951, 44; Картлис цховреба. История Грузии 2008, 382):

Այս ամուսնությունը կողմերի ու միջնորդի շահերի փոխադարձության արդյունք էր: Սահիբ Դիվանը դառնում էր Ավագ Զաքարյանի տիրույթների փաստական տերը, Խոշաքը հնարավորություն էր ստանում դրանք զերծ պահե-

լու Սմբատ Օրբելյանի և Ուլու Դավթի նկրտումներից, իսկ Սադուն Բ-ն, ի դեմս Սահիբ Դիվանի, հզոր հովանավոր էր ձեռք բերում ու ամրապնդում իր դիրքերը: Դրանից մեկ տարի անց՝ 1270-ին, Խոշաքն ու Սադուն Բ-ը մասնակցում են հայ եկեղեցու սասանված հեղինակության բարձրացմանը միտված Ձագավանի նշանավոր ժողովին: Դրան մասնակցում էին նաև նշանավոր իշխան Պռոշ Խաղբակյանն ու Սմբատ Օրբելյանը: Ուշագրավ է, բայց ոչ պատահական, որ ժողովին մասնակից իշխանավորների շարքում Խոշաքը հիշատակվում է առաջինը, իսկ Սադուն Բ-ն երրորդը՝ Պռոշ Խաղբակյանից հետո, Սմբատ Օրբելյանից առաջ (Գարեգին վրդ. 1913, 45): Պռոշ Խաղբակյանի՝ Սադունից առաջ հիշատակվելը բացատրվում է Ձագեձորը նրա տիրույթներում գտնվելով: XIV դարի վրաց Անանուն ժամանակագիրն իր հերթին Սադուն Բ-ի դիրքերի ամրապնդումը փաստելով դա բացատրում է նրա նկատմամբ ոչ միայն Հուլավու և Աբաղա (1265–1282) իլխանների, այլև Սահիբ Դիվանի բարեհաճությամբ, քանի որ նա իր կին Խոշաքի էջեբն էր՝ սենեկապետը (Картлис цховреба. История Грузии 2008, 375): Խոշաքի կողմից Սադուն Բ-ի՝ նրա էջիբ նշանակվելը ժամանակագիրը կրկնորդում է քիչ անց (Картлис цховреба. История Грузии 2008, 381): Ի վերջո 1272 թ. Սադուն Բ-ը դարձավ արևելավրացական թագավորության աթաբեկ ու ամիրսպասալարը, և XIV դարի վրաց Անանուն ժամանակագիրն ուներ բոլոր հիմքերը պնդելու, որ «Սադուն Մահկանաբերդցին իր ժամանակի մթավրերից առավել բարձր դիրքերի հասավ» (Картлис цховреба. История Грузии 2008, 381):

Ինքնին հասկանալի է, որ ի թիվս այլ գործոնների, Սադուն Բ-ի կտրուկ բարձրացման գործում իրենց դերն են խաղացել նաև ի դեմս Խոշաքի Ձաքարյանների Ավագյան տուն կոչվող ճյուղի հետ նրա ունեցած սերտ հարաբերությունները: Սակայն դրանց գերակա-ստորակայական բնույթը Սադուն Բ-ի աննախընթաց վերելքի հետևանքով փոխվեց: Դրա վկայությունն է Խոշաքի տիրույթներում գտնված Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցու մի արձանագրության մեջ նորատուսցիների կողմից Խոշաքին ու Սադուն Բ Մահկանաբերդցուն «տ(ե)րանց մերոց» ձևակերպմամբ հիշատակվելը (Ավագյան 1978, 277): Այս արձանագրության թվականը ՉԷ (1258) է: Ս. Ավագյանը գտնելով որ այդ տարեթիվը չի համապատասխանում Խոշաքի և Սադուն Բ-ի «տիրապետության ժամանակներին» և որ վերջինս աթաբեկ է դարձել իր կարծիքով 1270 թ. ու վախճանվել 1283 թ., առաջարկել է տարեթվի մեջ ավելացնել բաց թողնված Ի (20) տասնավորը և կարդալ ՉԻԷ, այսինքն՝ 1278 թ. (Ավագյան 1978, 279): Հ. Մարգարյանը Սադուն Բ-ի անունը Խոշաքից հետո հիշատակված լինելու հիմամբ վարանել է ընդունել Ս. Ավագյանի կողմից արձանագրության տարեթվի վերանայումը (Մարգարյան 2023, 196): Սակայն արձանագրության թվականի՝ Ս. Ավագյանի առաջարկած սրբագրումն ընդունելի է, քանի որ նախ և առաջ 1259 թ. Սադուն Բ-ն անվիճելիորեն աթաբեկ չէր և ապա Նորատուսի Սուրբ Աստվածածին եկեղեցին Խոշաքի տիրույթներում գտնվելու պատճառով է նա

1272 թ. արևելավրացական թագավորության աթաբեկ դարձած Սադուն Բ Մահկանաբերդցուց առաջ հիշատակվել:

Այս արձանագրությունը գրվելուց հետո Խոշաքի ու Սադուն Բ-ի փոխհարաբերությունների մասին աղբյուրներում վկայություններ չեն հանդիպում: Դրանից շատ չանցած՝ 1282/1283 թ. Սադուն Բ-ը վախճանվեց: Դրանից քիչ անց՝ 1284 թ. հոկտեմբերի 16-ին, Սահիբ Դիվանը մահապատժի ենթարկվեց (Рашид ад-Дин 1946, 115–116) և Ավագյան տան տիրույթները կրկին մտցվեցին վրաց արքունապատկան կալվածքների մեջ: Ուլու Դավթի որդի Դեմետրե II-ը (1270–1289), որի մայրը Գոնցան էր Սադուն Բ-ի ավագ որդի աթաբեկ և ամիրսպասալար Խութլու Բուղային նշանակեց Ավագյան տանը բնակվող արքայորդի Դավթի խնամակալ (Ղաֆադարյան 1975, 195): Ճիշտ է, հետագայում Խոշաքին հաջողվեց վերականգնել իր իրավունքները հայրական տիրույթների նկատմամբ, բայց դրանցում Խութլու Բուղան որևէ գործառույթ չունեցավ:

Սադուն Բ-ի երեխաներից Վանեն (Վանենի) ամուսնացել էր Շահնշահ Ա Զաքարյանի որդի ամիրսպասալար Մխարգրձելի հետ: Նրանք 1279 թ. կառուցել են Քոբայրի զանգակատուն-տապանատունը (Մուրադյան 1977, 177), Բացի այդ մոտավորապես նույն ժամանակներում ապահարկ դարձրել Սանահնի վանքը, նվիրատվություններ կատարել Հաղբատի վանքին (Դիվան հայ վիմագրության 2012, 53, 155–156):

Այս վիմագիր վկայություններով Զաքարյան և Մահկանաբերդցի իշխանական տների փոխհարաբերությունների մասին աղբյուրներում պահպանված տեղեկությունները սպառվում են: Այսպիսով, հայոց պատմության մեջ մնայուն հետք թողած այդ հզոր իշխանական տների փոխհարաբերությունները սկիզբ առան ու ավարտվեցին խնամիական կապի հաստատմամբ:

Եզրակացություններ

Զաքարյան և Մահկանաբերդցի իշխանական տների փոխհարաբերությունները սկիզբ են առել XII դ. կեսերին՝ Զաքարյանների տոհմավագ իշխան Զաքարե Ա-ի ավագ որդի Մեծ Սարգսի և Մահկանաբերդցիների տոհմի հիմնադիր իշխան Վահրամի դուստր Սահակդուխտի ամուսնությամբ: Այդ ամուսնությունն ուներ քաղաքական ենթատեքստ, իսկ երկու տոհմերի փոխհարաբերություններն առաջին փուլում կրում էին ոչ թե գերակա-ստորակայական, այլ՝ հորիզոնական բնույթ:

Նրանց փոխհարաբերությունների երկրորդ փուլում Մահկանաբերդցի իշխանական տան կրտսեր՝ Խավռասյան ճյուղը դարձավ Զաքարյան իշխանական տան Շահնշահյան կոչված ճյուղի ստորական: Մահկանաբերցիների ավագ՝ Սադունյան ճյուղն էլ սկզբում դարձավ Զաքարյանների իշխանական տան Ավագյան ճյուղի ստորական, սակայն հետագայում Սադունյանների հզորացման հետևանքով նրանց փոխհարաբերությունները գերակա-ստորակայականից վերաճեցին հորիզոնականի: Երկու տոհմերի փոխհարաբերություն-

ներն իրենց ավարտին հասան XIII դ. վերջերին՝ խնամիական կապի վերահաստատմամբ:

Շնորհակալական

Սույն հոդվածի վերաբերյալ շահեկան դիտարկումների համար շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գագիկ Սարգսյանին:

Գրականություն/References/Литература

1. Ալիշան Հ.Ղ. 1881, Շիրակ, Վենետիկ, հրատ. նշված չէ:
   Alishan H.G. 1881, Shirak, Venice, Publisher not indicated (in Armenian).
2. Ավագյան Ս. 1978, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Avagyan S. 1978, Textual Analysis of Stone Inscriptions, Yerevan, Yerevan University Publishing House (in Armenian).
3. Գարեգին վրդ. 1913, Ձագավանից ժողովը, Շողակաթ, Վաղարշապատ, հրատ. նշված չէ:
   Garegin vardapet, Dzagavan council, Shoghakat, Vagharshapat, Publisher not indicated (in Armenian).
4. Գրիգոր Ակներցի 1974, Պատմութիւն թաթարաց Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց:
   Grigor Aknertsi 1974, History of Tatars, Jerusalem, Saint Jacobean Publishing House (in Armenian).
5. Գրիգորյան Գ. 1981, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII–XIV դարեր), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
   Grigoryan G. 1981, Syunik during the Orbelyans (XIII–XIV Centuries), Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia (in Armenian).
6. Դիվան հայ վիմագրության 1966, պրակ I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
   Divan of Armeian Epigraphy 1966, vol. I, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia (in Armenian).
7. Դիվան հայ վիմագրության 1977, h. VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
   Divan of Armeian Epigraphy 1977, vol. VI, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia (in Armenian).
8. Դիվան հայ վիմագրության 2012, պրակ IX, Երևան, «Գիտություն»:
   Divan of Armeian Epigraphy 2012, vol. IX, Yerevan, Gitutyun (in Armenian).
9. Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն Հայոց, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
   Kirakos Gandzaketsi 1961, History of Armenians, Yerevan, Soviet Armenia Academy of Sciences Press (in Armenian).
10. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար 1984, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
    Colophons of Armenian Manuscripts, 13th Century 1984, Yerevan, Soviet Armenia Academy of Sciences Press (in Armenian).

11. Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Hovhannisyan A. 1957, Episodes of the History of Armenian Liberation Thought, Book One, Yerevan, Soviet Armenia Academy of Sciences Press (in Armenian).

12. Հովսեփեան Գ. 1969, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ, Անթիլիաս, հրատ. նշված չէ:
Hovsepyan A. 1969, The Khaghbakians or Proshians in Armenian History, Antilias, Publisher not indicated (in Armenian).

13. Ղաֆադարյան Կ. 1975, Երևան, ՀՍՀ ԳԱ հրատ.:
Ghafadaryan K. 1975, Yerevan, Soviet Armenia Academy of Sciences Press (in Armenian).

14. Մանանդյան Հ. 1952, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Manandyan H. 1952, Examinational History of Armenia, vol. III, Yerevan, Soviet Armenia Academy of Sciences Press (in Armenian).

15. Մանր ժամանակագրություններ 1951, հ. I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Minor Chronicles 1951, vol. I, Yerevan, Soviet Armenia Academy of Sciences Press (in Armenian).

16. Մարգարյան Հ. 2023, Նշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարից – ԺԳ դարի առաջին կեսին, Երևան, «Գիտություն»:
Margaryan H. 2023, Notable Princely Houses in Armenia from the 12th Century to the First Half of the 13th Century, Gitutyun (in Armenian).

17. Մուրադյան Պ. 1977, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, ԵՊՀ հրատ.:
Muradyan P. 1977, Georgian Inscriptions of Armenia, Yerevan, University Publishing House (in Armenian).

18. Ստեփանոս Օրբելյան 1910, Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, Էլեքտրաշարժ տպարան օրիորդ Ն. Աղանեանցի:
Stepanos Orbelyan 1910, History of Sis State by Stepanos Orbelyan and Archbishop of Syunik, Electric Printing of Ms.N. Aghayatnts (in Armenian).

19. Վարդան վարդապետ 1862, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ ի Սուրբ Ղազար, հրատ. նշված չէ:
Vardan Vardapet 1862, The Collection of History Illustrated by Vardan Vardapet, Venice, St. Lazarus Cathedral, Publisher not indicated (in Armenian).

20. Վիմական տարեգիր 1913, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, հրատ. նշված չէ:
Epigraphic Chronicles 1913, by K. Kostanyants, St. Petersburg, Publisher not indicated (in Armenian).

21. Картлис цховреба. История Грузии 2008, Тбилиси, изд. «Артануджи».
Kartlis Tskhovreba. History of Georgia 2008, Tbilisi, Publishing House Artanuji (in Russian).

22. Рашид ад-Дин 1946, Сборник летописей, т. III, Москва-Ленинград, изд. АН СССР.
Rashid ad-Din 1946, Collection of Chronicles, vol. III, Moscow-Leningrad, National Academy of Science of USSR (in Russian).